

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տարեկան գինը 10—2 ժամ
(Բացի կիրակի և ածն օրերից):

Յայտարարութիւններ ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ներկայում 1887 թիւին

Հրատարակւում է Թիֆլիսում, Նոյն դիրքով և Նոյն պրոգրամայով: Մեր ստանդարտները սերտական
Հետադարձութիւններ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ՌՄԲԱԳՐԱՍԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարիայի տանը):
Կայտարարութիւնները «ՄՇԱԿ»-ը գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆՈՒՆԻ

Армянская газета „МШАКЪ“ печатаетъ объявленія на армянскомъ, русскомъ и иностранныхъ языкахъ.

ПЛАТА за объявленія на четвертой страницѣ: 2 копѣйки со слова. Съ объявленій печатаемыхъ болѣе десяти разъ, дѣлается уступка.

Плата впередъ.
За ТРАУРНЫЯ объявленія на четвертой страницѣ взимается по 2 рубля, на первой страницѣ 4 рубля.

На первой страницѣ „Мшака“ никакія постороннія объявленія КРОМѢ ТРАУРНЫХЪ не печатаются.

Адресъ: ТИФЛИСЪ, редакция газ. „Мшакъ“.

ԲՈՎԱՆԻՍԱԿՈՒԹԻՒՆ

Պատճառներից մէկը որ հայոց լրագրերը չէ տարածվում. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նոր-Բագրատից. Ներքին լուրեր. — ԱՍՏՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջառնական փոփոխութիւններ Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում հանդէսը. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՆԵՐ. — Հետադարձութիւններ. — ԲՈՎԱՆԻՍԱԿՈՒԹԻՒՆ. — ՊԱՏԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵԿԸ ՈՐ ՀԱՅՈՑ ԼՐԱԳՐԻՐ 26
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ինչքան էլ լաւ հրատարակեք հայոց թերթը, — կարծեալ նա այնքան չէ տարած-
վում որ կարողանայ առանց զգալի զէֆի-
ցիտի ամենօրեայ դառնալ և շատ շատ
կարող է շարաքեր երկր անգամ հրատա-
րակվել: Ի հարկէ պիտուի պատճառներից
մէկը, որ հայոց թերթի բաժանորդների
թիւը հազիւ 1200 հոգու է հասնում, իսկ
բաժանորդների արանից աւելի մեծ
թիւը մի երազական թիւ պէտք է համար-
են, այն է, որ մի կողմից մեր ազգի ին-
տելիկեցիներ, լուսաւորված դասակարգը
այլ ևս չէ խօսում: Եւ զրու՞մ է չէ կար-
գում հայերէն, իսկ մեր հասարակական
ստորին է միջին դասակարգերի մեծամաս-
նութիւնը, որոնք զուցէ և ոչ մի ուրիշ
լեզու չը գիտեն բացի հայերէնից, ամենե-
ւին ընթերցանութեան մէջ ոչինչ կարել
չեն զրու՞մ վարում են կատարելապէս ա-
նասնական կեանք, առանց որ և է պա-
հանջ ունենալու զէպի մտաւոր կեանքը:
Արանք ապրում են միմյանի ուտելու, խը-
մելու, քնելու և ապագայ սերունդ բազ-
մացնելու նպատակով: Պէտք է խոստովան-
վել, սակայն, որ և մեր ինտելիգենտ հա-
մարձիկներից շատերը, նոյն իսկ նախկին
համալսարանականները, ապրում են նոյն-
պէս միմյանի ուտելու, խմելու, քնելու և
ապագայ սերունդ բազմացնելու համար:

Վերջերս Թիֆլիս քաղաքը, որտեղ ապ-
րում են 40 հազարի շախ հայեր, որոնց
մեծ մասը այժմ շատ լաւ գիտեն հայերէն:
Եւ ահա, այդ տեսակ կենտրոնում հայոց
թերթը ունի 200, շատ շատ 250 բաժա-
նորդ: Ուրեմն քաղաքի 40,000 հայոց
ազգաբնակչութեան մէջ 39,800 հոգի կամ
ոչինչ չեն կարգում, կամ մասամբ կար-
գում են ուսուցիչ և վրաց լրագիրներ:
Բայց եթէ կարծէիք, որ ուսուցիչ կամ վրաց

լրագիրները այստեղ անհամեմատ աւելի
շատ բաժանորդ ունեն, չարաչար կը սխա-
լվէիք: Այստեղի ուսուցիչ թերթերն էլ ու-
նեն քաղաքում շատ շատ 500 բաժանորդ,
իսկ քաղաքից դուրս, բոլոր գաւառական
քաղաքներում, շատ շատ նոյնպէս 500 բա-
ժանորդ: Վրաց թերթերը սրանից էլ պա-
հան բաժանորդ ունեն քաղաքում:

Ուրեմն Թիֆլիսի 40 հազար հոգուց բազ-
մացած հայոց ազգաբնակչութիւնը ուսուցիչ
լրագիրներն էլ հայոց լրագիրներից աւելի
չէ կարգում, որովհետեւ չէ կարելի ընդունել
որ ուսուցիչ թերթի 500 քաղաքային բա-
ժանորդները բոլորն էլ հայեր լինէին, այլ
նրանց մէջ ամեն տեսակ ազգութիւնների
պատկանող բաժանորդներ կան:

Ուրեմն մեր հայոց մամուլի չը տարած-
վելու գլխաւոր պատճառներից միին է
հայոց ամեն դասակարգերի հասարակու-
թեան անընթերցանութիւնը և ան-
տարբերութիւնը զէպի մտաւոր կեանքը:

Բայց մեր լրագիրների չը տարածվելու
պատճառներից միին է նմանապէս և մեր
երկրի փոստային յարաբերութիւնների ան-
կանօնութիւնը և շատ տեղ փոստի կատա-
րելով բացակայութիւնը: Բայց եթէ Անդը-
կովկասում առիթ ունենք շատ անգամ
զանգաւորելու փոստի անկանօնութեան
զէմ, դրանից հազար անգամ աւելի կարող
ենք զանգաւորել Անդրկովկասի սահմանա-
դուլ երկրներին, Պարսկաստանի և Թիւր-
քաց-Հայաստանի ու Փոքր-Ասիայի փոստա-
յին յարաբերութիւնների ոչ թէ միայն
անկանօնութեան, այլ մինչև անգամ կա-
տարեալ բացակայութեան զէմ: Գեո Պարս-
կաստանի փոստերը օտարազգիների ձեռ-
քում են, որոնք աշխատում են քիչ թէ
շատ կանօնադրութիւն տալ այդ երկրի
փոստային յարաբերութիւններին, իսկ ասիա-
կան Թիւրքիայում տիրում է կատարեալ անիշ-
խանութիւն փոստային յարաբերութիւնների
վերաբերմամբ: Որքան հայեր են ապրում
Թիւրքաց Հայաստանում և առհասարակ
Թիւրքիայում, նրանց թիւը, առում է, մի
երկու միլիոնի է հասնում: Բաւական թւով
ապրում են հայեր և Պարսկաստանում:
Որքան կաւելանաւոր Թիֆլիսում հրատա-
րակվող հայոց թերթերի բաժանորդների
թիւը, եթէ փոստային յարաբերութիւննե-
րը Թիւրքաց Հայաստանում, Փոքր-Ասիա-
յում և Պարսկաստանում քիչ թէ շատ օ-
րինաւոր լինէին:

Իսկ այժմ այնտեղի հայերը սիրտ էլ

չունեն Անդրկովկասում հրատարակվող հա-
յոց թերթին գրվելու, որովհետեւ գիտեն
թէ մի և նոյն է, կանօնաւոր կերպով ստա-
նալու չեն թերթը, իսկ գուցէ ամենեւին էլ
չեն ստանալու: Եւ ճշմարիտ, օր չէ անց-
նում որ մանաւանդ ասիական Թիւրքիայի
և առհասարակ Թիւրքիայի մեր սակաւա-
թիւ բաժանորդներից զանգաւորեն չը ստա-
նայինք թէ «Մշակը» կանօնաւոր կերպով
իրանց չէ հասնում, տաս համարից զուցէ
մէկն է միայն իրանց ձեռքը հասնում:

Միայն մի բան զարմանալի է. Թիւր-
քահայաստանի հայերը մինչև այժմ կար-
ծես, զեռ չեն հասկացել թէ ինչ է Թիւր-
քիան, ինչ են Թիւրքաց կարգերը, ինչ
են իրանց ամեն տեսակ վարչութիւնները,
որոնց թւում և փոստային վարչութիւնը, —
և փոխանակ իրանց վարչութիւնների ան-
հոգութեան, անկարգութիւնների և զեղ-
ծութիւնների դէմ զանգաւորելու, յանգնում
են ամենադառն յանդիմանական նամակներ
գրել «Մշակի» խմբագրութեանը, այնքան
միամիտ լինելով, կամ միամիտ ձևացնելով
որ կարծում են թէ խմբագրութիւնն է որ
իր թերթը չէ ուղարկում կանօնաւոր կեր-
պով և ոչ թէ Թիւրքաց փոստն է, որ ի
չար է գործ ածում իր պետութեան հպա-
տանքների հաւատարմութիւնը:

Իրանք ստորում են անիշխանական երկ-
րի մէջ, — և հաւատացած են թէ մենք չենք
ուղարկում մեր թերթը մեր բաժանորդ-
ներին: Մենք համ զեղեցիկ և պարզ, որոշ
կերպով տալում ենք մեր բաժանորդների
հասցէները բանդերոյնների վրա, համ կա-
նօնաւոր կերպով ուղարկում ենք թերթի
իւրաքանչիւր համարը, համ էր վերջապէս,
փող ենք վճարում փոստին իւրաքանչիւր
բաժանորդի համարների ճանապարհածախ-
սի համար, — և դարձեալ ոչինչ չէ օգնում...
Թիւրքաց փոստը անկարգ է համարում
լրագրի համարները բաժանորդներին հաս-
ցնելու:

Այդ տեսակ հանգամանքներում լրագրի
բաժանորդագրութեան շրջանը կը սահմա-
նափակվի միմիայն ուսուցիչների և եր-
բէք չի անցնի, չի տարածվի այն երկիր-
ներում, Թիւրքաց Հայաստանում և Փոքր-
Ասիայում, որտեղ հայերը աւելի բազմա-
թիւ են:

Եւ ինչի՞ են կարծում այդ միամիտ
թիւրքահայաստան հայերը, որ մենք մեր
թերթը ուղիղ նրանց անունով անկանօն
կերպով ենք ուղարկում, իսկ ամեն տեղ կա-
նօնաւոր կերպով ենք ուղարկում: Ինչի
«Մշակը» կանօնաւոր կերպով հասնում է
Ասորիստան, Վարսառով, Պետերբուրգ, Վոսկիլա,
Կրասնով, կանօնաւոր կերպով ստացվում է
Ֆինլանդիայում, Գերմանիայում, Ֆրանսիա-
յում, Անգլիայում, Իտալիայում, Շվեյցարիա-
յում, Հնդկաստանում, Բիրմանիայում, —
իսկ ուղիղ մեր քիթի տակ ընկած Թիւր-
քաց Հայաստանում և Փոքր-Ասիայում եր-
բէք լրագրի համարները կանօնաւոր կեր-
պով չեն ստացվում... Որովհետեւ Թիւր-
քիայում, ինչպէս և ուրիշ բաներում, տի-
րում է և փոստային վարչութեան մէջ կա-
տարեալ անարկաւ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՍԱԳԵՏԻՑ

Մայիսի 10-ին

Ժողովրդական վերջին ցուցակագրութիւնով
այստեղի ժողովուրդը հաշւած է 1185 տուն,
7461 հոգի բնակիչներով, որոնցից 3940 արա-
կան, և 3521 երակտան սեռին են պատկանում:
Արանք թւում են մէկ տուն մալական և վեց
տուն քրդեր, մնացածները հայեր են: Բնակիչների
1/10 մասը պարսպում են առևտուրով, 1/10 ար-
հեստագործներ են, 1/10 ծառայող և հոգևորական
են, իսկ մնացածը հողագործ: Վերջին պատերազ-

մից մինչև այժմ առևտուրն էլ, արհեստն էլ ըն-
կած դրութեան մէջ են գտնվում, հողագործներն
էլ անբաւական են իրանց վիճակից: Այստեղի
առևտուրը շատ անկանօն է, բառի բուն նշանա-
կութեամբ: Առնում են նիսիա, ծախում են նիսիա
վաճառականը 18 ամսվայ ընթացքում հազիւ է
կարողանում իր ապրանքը մի անգամ նաղաղ-
նել: Ահա ինչպէս Բագրատ Թիֆլիսում ապրանքը
առնում է նիսիա 8—10 ամիս ժամանակով, այս-
տեղ վաճառում է զիւղայիններին դարձեալ նի-
սիա՝ մէկ և երբեմն մի քանի տարի ժամանակով:
Գրանից յետոյ հաւաքում է իր ապուրիները ոչ
թէ նաղը փողով, — զիւղացին նաղը փող չունի, —
այլ առնում է տաւար, ոչխար, հացահատիկ, իւղ,
ձէթ և զիւղացու միւս արդիւնաբերութիւնները:

Մինչև վաճառականը նաղաղանում է իր ժող-
ված ապրանքը, անցնում է 5—6 ամիս, և ապա
հազիւ կարողանում է նաղը փող ունենալ, իր
պարտքը՝ հանդերձ բարդված տոկոսներով վճարել
Թիֆլիսեցուն, նորից նիսիա ապրանք բերելու
պայմանով: Միայն տեղական մի քանի արաւազ-
ներն են նաղը առնվում և նաղը վաճառվում,
արտահանելով ուրիշ քաղաքներ: Տարեկան արտա-
հանվում է 500—600 զմէկի կաշի 10,000 ռուբ-
լու արծողութեամբ, 1500 պուշ հալած իւղ
15,000 ռուբլու, (վերջին ժամանակները իւղն էլ
նիսիա ծախելու դէպքեր շատ են լինում) 2000
— 3000 պուշ կտուրաւոր և սորուկի ձէթ 6000
ռուբլու, 2000 հատ աղուէսի մորթի 3000 ռուբլու,
հաւի ձու՝ մօտ 2000 ռուբլու: Նիսիայի փոխարէն
զիւղացուց առնում են մօտ 10,000 տաւար և
նոյնքան ոչխար և Թիֆլիսում վաճառում են
200 կամ 250 հազար ռուբլու:

Արհեստագործները իրանք արհեստով պարա-
պրում են միայն ձմեռ ժամանակ, միւս ժամանակ-
ները հողագործութեամբ են պարապում: Հողա-
գործները պարապում են հին նահապետական
ձևով. նոր սիստեմայի գործընելը չը կան յերկա-
գործի արդիւնքը շատ անգամ բաւարար չէ լի-
նում: Այստեղ այժմ սկսվել են անձրեային եղա-
նակներ. սպասվում է առնաւ հունձ. ցանքի հա-
մար նոր ցորենը ծախվում է 23—24 ռուբլիով,
իսկ հին ցորենը 20—21 ռուբլիով:

Ամիս 5-ին երևանի նահանգի ժողովրդական
ուսումնարանների տեսուչ պ. Պալապով այցելեց
այստեղի քաղաքային և հայոց երկսեռ ուսումնարան-
ները: Այդ վերջիններում նա հարցրեց ուսումնա-
րանի տարեկան մուտքը ու ծախքը, ուսուցիչների
թիւը և նրանց առկի որքանութիւնը, աշակերտ-
ների և աշակերտուհիների թիւը և որ դասակար-
գին պատկանելու, և այդ բոլոր տեղեւորութիւնները
զրի անցկացնելով առաւ իր հետ: Պ. Պալապով
ընկեց ուսուցիչ լեզուից աշակերտներին և աշա-
կերտուհիներին և շատ դո՛ւ մնաց:

Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

Երէկ, ուրբաթ օր, մայիսի 15-ին, Թաղաւոր
կայսրի թագադրութեան օրը, Թիֆլիսի բոլոր
եկեղեցիներում գոհացողական մաղթանքներ կա-
տարվեցան և ամբողջ քաղաքը զարդարված էր
գրուկներով:

Կերակի օր, մայիսի 17-ին, Թիֆլիսի Մուշտաիդ
կոչված այգիում կայանալու է ժողովրդական
դրօսանք՝ վիճակախաղի հետ միասին, «Վրացիներ-
ի մէջ դրադրութիւն տարածող ընկերութեան»
օգտին: Զբօսանքը կը սկսվի կէսօրից յետոյ ժա-
մը 4-ին: Վիճակախաղի տոմսակի վինն է 20
կոպեկ: Զբօսանքի ժամանակ կը լինի հրազարդ
և հրախաղութիւն, կը նուազի նուազածուներին
խումբը և տեղական դուռնան: Ի նկատի ունե-
նալով, որ դրօսանքից դուրսացած արդիւնքը պէտք
է յատկացվի «Վրացիներին մէջ դրադրութիւն տա-
րածող ընկերութեան», պէտք է յուսալ, որ հա-
սարակութիւնը անտարբեր չի լինի զէպի կերակի
օրվայ դրօսանքը:

Ի հարկէ, մեր Հայաստանցի բարեկամ պ. Նիկողոսեանն տարբեր քան պիտի խօսիմ ես, զվանդի արհեստագիտութեամբ զբարձած եմ ատենեան Քանաւոն-հինգ տարի առաջ, երիտասարդութեանս ժամանակ, կտաւ կը զործէին մեր տան մէջ եւ ես վերապացու էի զործաւորաց լրայ ու կը զործէի միանգամայն ինտու, վարապայ լանդը գտնուած միջոցիս, երբ արհեստը թողած ու զդիւր ձեռք առած էի երբեմն տաւ կը քաշէի կտաւս զործելու համար. ինչ եւ իջէ, զրէշ գործածինս արհեստ մ'է: Այս աշխարհիս վրա թագաւորներէն

սկսեալ մինչև յետին մարզն ամեն ոք մէկմէկ
բան կը գործէ, մէկմէկ արհեստով կը զբաղի.
բայց կայ մաս մը որ մէկ կողմ նստած միւս մաս-
ի գործերը կը դիտէ, այդ մասը կը կարգէն կի-
նեմը: Եւրոպայի նորածնութիւնը մոռցնել տուին
աշխատելու ամեն տրամադրութիւն. այսօր պղ-
սեցի կինը բաւական կը համարի իւր պիտոյն
հոգալու համար Բերա երթալ ուր կը գտնէ պատ-
րաստ զխարկը և ամեն դարդարանը. ընտրութիւն
մը կ'ընէ, կը գտնէ և տուն կը վերադառնայ, այլ
ևս յարմարեցնելու կամ յօրինելու հոգն իսկ թող-
ուած չէ իրեն թէև իրաւ է որ աշխարհիս լաւա-
գոյն բանն է պատրաստ գտնելն, այլ կը
մտածէր արեւելք թէ ձեր այլեր ինչ քրտինք կը
թափեն, ինչ ներութիւն կը քաշեն այդ ծախսը
դէմ դնելու համար, բայց այլերն ալ յանցանք
ունեն, եթէ անոնք ժամանակին հայել տային ի-
րենց ընտանեաց, եթէ իրենց դրամական վիճակը
ծանօթացնէին անոնց, կանաչք ալ զաղափար
կուենային առեւտրական գործոց վրայ և ըստ
այնմ կը շարժէին ու ճշմարիտ օգնականներ կը
լինէին առն և մասնակից նորա տառապանաց:
Սակայն զգալիութիւնն հոն է որ այլերը փափ-
կութիւն, հպարտութիւն կունենան իրենց
վիճակը ծածկելու, մինչև այն օրն որ խաղաղ
խանին կամ Գոմիսիոն խանին մէջ սնանկանալէ
յետոյ, իրիկուն մը տուն կը դառնան և տխուր
իրողութիւնը կը յայտնեն Անա այս կայսրութեան
զարման մը տանելու համար այսօր որ արհեստա-
նոցի մը հիմնարկութեան սկզբնաւորութիւն կը
լինի, կը գտնուի Գլուխն մէջ նախաձեռնու-
թիւնն և նորա պաշտօնակիցները: Արտեսանոցի
բանկը ուղղութեան նկատմամբ Գլուխի առա-
կախօսին մէկ առակը միտքս կուգայ: Մարդ մը
Եւրոպա կերթայ. պատուական երկրագործութիւն
կուսան և իւր դիւրը կը վերադառնայ, հոն
մի դրացի ունի որ իւր նախահարկերէ ուսած
եղանակով կը մշակէ պարտէզը. զարուհ կուգայ
մեր երկրագործը սեղանը կը բանայ, թուղթերն
ու գործիքները կը տարածէ և կը սկսի երկրա-
գործական ծրարողով արտեր պատրաստել. անդին
իւր դրացի մշակը կայաքաղաք, աշուր կուգայ
պտուղները, տունները կը համին իւր պարտիկին
մէջ, մինչ եւրոպական ուսում առած խեղճ
երկրագործը տակաւին կը գծէր ու կը սպասէր
իւր հունձը քաղելու: Այս առակը մեզ օրինակ
ըլլայ. դժուր ժամանակն անցած է այլ ևս, որչափ
պարզ ըլլան մեր Արհեստանոցի աշխատութեան
ծրարիքը, այնքան աւելի արդիւնաւոր կը լինի.
ես մի ծեր փորձառու եմ և իմ փորձառութիւնս
այս ըսելը կը թելադրէ: Վնաս չունի, մեր տիկին-
ներու մէկ ֆիզիոլոգն զարգարանք պակաս ըլլայ,
բայց կը փափաղի որ այդ պիտակի տակի
զուկները մշակուած լինին. ահա այն ատեն
մեր կանաչք կը լինին ճշմարիտ ագնական տի-
կիններ:

Յարատւութիւն և հաստատուն կամը կը մաղ-
թեն Արտեսանոցի հոգաբարձութեան. կը փա-
խաբիմ մանաւանդ որ ժողովուրդն օգնէ անոնց և
քաջաբերէ անոնց վանքը. անհատական ոյժն
անբաւական է: Ես մի մասիս կըսեմ ահա թէ
այս հաստատութիւն չայոք համար յոյժ կարգ
հաստատութիւն մէ որ պէտք է իր նմաններն ու-
նենայ: Կը խնդրեմ որ ամեն ոք իւր բաժինն ու-
նենայ այս օգտակար գործը մէջ, այն ալ, կինն
ալ իրենց կարողութեան չափով աշխատին, գոր-
ծեն և մանաւանդ տնտեսութեամբ գործեն և
թող չհաւան որ մէկու բաժինն ընկերոջը վրայ
ծանրանայ:

Ատենաբան Սրբազան վերջումը, իբր գովելի
օրինակ, յիշեց Գարբերդի հայ կանանց արհես-
տագործութիւնն, որի նորի՛ն Գարբերդի ընդար-
ձակ դաւառի աղբյուրը տեղական կտաններով
են հաղնիւմ, ուր այդ ու կին հաւասարապէս
աշխատում են, և խօսքը կնքեց ջերմ բարե-
մաղթութեամբ և օրհնութիւններով. ճառին յա-
ջորդեցին լուսն ծախահարութիւններ:

Հայրիկի ատենաբանութիւնից յետոյ, երգուեցաւ
«Մայր-Սրբաբն» և Արհեստանոցի ուսանողներինե-
րից օր. Զարուհի Սիրաբեան մի գրաւոր ուղերձ
կարդաց, երախտագրութիւն և շնորհակալու-
թիւն արտայայտելով իր բոլոր ընկերակիցներին
կողմից:

Ապա խօսեց պատրիարքը, բացառելով արուես-
տից կարեւորութիւնը, յիշեց թէ մէկ տարից աւե-
լի է արդէն որ յղացած է արհեստանոցի զաղա-
փարը. հրաւեր կարդաց Բերայի աղբյուրներին
նպատակը այս օգտակար հաստատութեան և ու-
րիշ թաղերի հայերին հրաւերեց հետեւ այս օրի-
նակին և աշխատել աղջկանց արուեստանոցներ
ունենալ իրենց թաղերի մէջ ևս. ս. նախագահը
խօսքը կնքեց մաղթանքներ անելով Սուլթանի
համար, օրհնեց ներկայ հանդիսականներին և Ար-
հեստանոցը բացված հռչակեց:

Հանդիսականները միմեկուց առաջ այցելեցին
Արհեստանոցի բոլոր յարկերն ու դասարանները:
Պատրիարքը, եկեղեցական դասը և ներկայ աղ-
գանոց շատերը յաւարտ հանդիսին, հիւրընկա-
լուեցան թաղ. խորհրդարանի սրահին մէջ:

ԱՐՏԱԲՆԻ ԼՈՒՐԵՐ

— Զէնոփորայի Նիկողայոս իշխանը իր ընտա-

նիքով ուղեւորվելու է Բաղդադ և ճանապարհին
կայացելի վիճենաւ:

— Նոր ֆրանսիական միւնիստրութեան նախա-
գահը թեկնածուներ համարվում են Ֆրէյսինէ,
Դրօլէ, Բուլիէ և Լիւմանսո: Մամուլը չէ ցաւում
որ Գօբլէ հրաժարական է տուել, միայն պահան-
ջում է, որ Բուլանտէ մնայ պատերազմական մի-
նիստրի պաշտօնում:

— Փարիզից գրում են արտասահմանի հայոց
լրագիրներին, որ այնտեղի հայոց կուսիսն մայի-
սի 8-ին, Սահակ քահանայի առաջնորդութեամբ
այցելեց Ան-Վերի մէջ Լէօն վեցերորդի գերեզմա-
նը: Քահանայի ճառից յետոյ խօսեց այնտեղի
հայոց ընկերութեան նախագահ Ս. Խալիկէն:
պարտի ճառը մեծ տպաւորութիւն թողեց:
Ներկայ եղող օտարականների վրա ևս այդ
բոլորը գեղեցիկ տպաւորութիւն թողեց:

— Վանից գրում են, որ Ալեքսանդր եպիսկո-
պոսը հաշտութիւն գցեց Վանի հայերի ալ և
այլ կուսակցութիւնների մէջ. բայց ինչպէս ե-
րևում է այդ հաշտութիւնը միմիայն առերես
է:

— Բօլզարայի խաւքեղ քաղաքում այժմ բը-
նակվում են 30—35 հայեր, որոնք այնտեղ են
գաղթել Աղբիւնուալօյի վերջին ուս-տաճա-
կան պատերազմից յետոյ:

— Սօֆիայից գրում են, որ խնամակալութիւնը
շատ էլ չէ շտապում աղբյուրի ժողովը դաժարե-
լու, քանի որ ինքը խնամակալութիւնը գործելու
իրաւունք է ստացել անորոշ ժամանակով:

— Վիեննայից հաղորդում են, որ Ֆրանց-Յոլ-
սէի կայսրը մտադր է Էմա գնալ՝ Վիեննա
կայսրի հետ տեսնելու նպատակով:

— Վիեննայից գրում են, որ Ստոիլով մտադր
է չուտով Սօֆիա վերադառնալ:

— Փարիզից գրում են, որ եթէ նոր մինիստ-
րութիւն կազմվի, միանգամայն հաւանական է,
որ գնեւոր Բուլանտէ անգամ կը լինի և նոր մի-
նիստրութեան պահելով պատերազմական մի-
նիստրի պաշտօնը:

— Մադրիդից գրում են եւրոպական լրագիրնե-
րին, որ խնամակալութիւն-թագուհու և այժմեան
ազատամիտ մինիստրութեան ունեցած ժողովը-
դականութիւնը աւելի և աւելի աճում է և այժ-
մեան կառավարութեան հակառակորդները բոլոր-
ովին յոյս չունեն որ և ինչ անողութիւն ունե-
նալու:

— Բալարայից հաղորդում են, որ խնամակալ
Լուիսիօլը ձգտում է թագաւոր լինել, և իր ժա-
ռանք նշանակել իր երկրորդ որդուն, որը պակ-
սած է Ֆրանց-Յոլսէի կայսրի աղջկայ հետ: Այդ
նպատակով էլ Լուիսիօլը գնացել է Վիեննա:

— Հւոմից գրում են, որ Վատիկանի մէջ մեծ
ցանկութիւն կայ աւելի մօտիկ յարաբերութիւն-
ներ կապելու կառավարութեան հետ. բայց կա-
ռավարչական շրջաններում շատ կասկածով են
նայում հոգեւոր իշխանութեան այդ ձգտման վրա,
և միանգամայն աղքի ցանկութեան հակառակ են
համարում այդ հաշտութիւնը:

— Մադրիդի գաղթական երկիրները Աֆրիկա-
յում հարստացան մի նոր տիրապետութեամբ,
ամբողջ Զուլուանդը անցաւ անդլիական իշխա-
նութեան ներքոյ:

— Բօլզարական կառավարութիւնը մարդիկ է
ուղարկել Վիեննա նոր փոխառութեան մասին
բանակցութիւններ սկսելու:

— Բրիտանից գրում են, որ բէլգիացի, ուսու
և գերմանացի ֆինանսիստների այստեղ հիմնված
ընկերութիւնը՝ յանձն առաւ երկաթուղու գիծ
անցկացնել Թէհրանից մինչև Դա-Արզու-Ասիմ:

— «Morn. News» հեռագիր է տպել, որի մէջ
ասված է որ բօլզարական խնամակալները դիտա-
ւորութիւն ունեն առաջարկել բօլզարական գահը
Բուլանտէի կողմ թագաւորելու: Ասում են, որ
այդ առաջարկութիւնը պաշտպանութիւն կը գըտ-
նի Աղբիւնայում և Գերմանիայում, բայց այդ ա-
ռաջարկութեան լուրը մեծ անհանգստութիւն է
պատճառում Սերբիայի թագաւորին:

ԽՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս Ստարաբուրգի դատարանում մեղա-
դրվում էր մի 14 տարեկան երեխայ: Այդ 14
տարեկան երեխան մեղադրվում էր գերմանացի
Վիլհելմ կայսրին վիճակում հարկելու մէջ: Ինչին
Նրանով, որ զարգացում, Վիլհելմի ծննդն առ-
բեղարձի ժամանակ, երբ ամենքը գոչեցին՝ «հօխ»
(կեցցէ), նա ասեց՝ «կորչի Պրուսիան»:

Գործադու գործադուի ետեւից... Նիւ-Եօրկից
գրում են, որ գերմանափոխիկներն էլ նո-
րերումս գործադու արեցին. հրատարակեցին մի
շրջաբերական, որով պահանջում են շտապեցնել
իրանց աշխատանքի վարձը:

Բժշկական ընտրութիւններից երևում է, որ կոր-
սեցները, որ գործ են ածում կանայք, շատ աւելի
մնասակար են այն ժամանակ, երբ այդ կորսեց-
ները բարձր կուլված տեսակիցն են. բարձր
կորսեցնող սեղմում է ամբողջ կուրծքը, թոքերը,
ստամոքսից սկսած մինչև ուսերը. դրանից ոչ
ստամոքսն է կարողանում աղատ շարժվել մար-
սողութեան համար, և ոչ էլ թոքերն են կարո-
ղանում աղատ կերպով բարձրանալ. հետևանքը
լինում է այն, որ արեան շրջանառութիւնը խան-
գարվում է, արեւնը հոսում է դէպի գլուխը, և
առաջ են գալիս զանազան հիւանդութիւններ, նոյն
իսկ թոքախտ: Բարձր ձևի կորսեցները այդպի-
սով անպայման մնասակար են, մինչդեռ, յամե-
նայն դէպս, եթէ կանաչք չեն կարող չնմայն-
վել մօղային, եթէ զորածնէին կարճ ձևի կոր-
սեցներ, դրանից չօչափելի վնասներ գուցէ և
առաջ չէին դալ...

1880—1883 թվականի ընթացքում Ֆրանսիա-
յում մահուան պատժի ենթարկվել են 10 հոգի.
Պրուսիայում՝ 1871—1884 թվականներում՝ 18
հոգի. Աւստրիայում՝ 1887—1884 թվականում՝
7 հոգի. Անգլիայում 1850—1879 թվականնե-
րում՝ 372 հոգի: Իտալիայում և Բելգիայում
1876—1883 թվականներում մահուան պատժի ոչ
մի դէպք չէ եղել:

Շատ անգամ հետաքրքիր հասցեներ են պա-
տանում փոստով ուղարկվող նամակների ծրարնե-
րի վրա: Նորերումս մեզ աղբյուրացաւ կարգաւ մի
հասցէ Գուլայիսի նահանգի Նոյ-Սմանի տեղից
ուղարկված մի նամակի ծրարի վրա, որ այնքան
հետաքրքիր է, որ մենք ամբողջութեամբ ենք ար-
տասարում այստեղ. На Тифлисе, мой братъ
Сандро на большой классный Гемназий катори
стантъ на бульваръ. Одай швейцаръ, если ни
будитъ одай горнишни, горнишни ни будитъ
одай поверъ, если поверъ нбтъ, на алошку по-
ложи ни бойся сабака ни укуснтъ.

ՄՇԱԿԻ ՀՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄԱՆԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐՈՒԴԻ, 13 մայիս: Հրատարակված է
մինիստրների մասնագործի կարծիքը, որի դո-
րութեամբ այն շաքարագործարանները, որոնք
խնդրադիր էին ներկայացրել յետաձգել անցած
ժամանակի ակցիզային վճարը և արտահանած
պէմօն մինչև մարտի 1-ը 1887 թվի և որոնք
այդ մասին թոյլտուութիւն չեն ստացել,—վերց-
վում է մինչև մարտի 1-ը ամբողջութեամբ չը
վճարած ապտուիքը հաւասարապէս այն գործա-
րանների հետ, որոնց թոյլտուութիւն էր վճարել
տուգանքը ամսական 1 1/2 օր չափով, փոխանակ
20/օր, հաշվելով ամսի մի մասը ամբողջ ամսի
տեղ: Շաքարագործարանները, որոնք վճարած են
իրանց վրա մնացած ակցիզային ապտուիքը և
արտահանման պէմօն մարտի 3-ին 1887 թվի,
աղատվում են մարտ ամսի ընթացքում աւելա-
ցած տուգանքի վճարելուց:

ՊԵՏԵՐՈՒԴԻ, 13 մայիս: «Русский Инвалид»
դրականապէս հերքում է այն տեղեկութիւնները,
որոնք նորերումս Մէրլից գրված թղթակցու-
թեան ձևով տպուեցան «Русское Дѣло» լրա-
դրում, և որոնք վերաբերվում են անդրկասպիան
զինուորական երկաթուղուն ու նրա կառուցանո-
ղին: Ինչպէս երևում է յիշեալ թղթակցութիւնը
ուրիշ նպատակ չունի, եթէ ոչ աննպատակ
դիքի մէջ ներկայացնել երկաթուղու կառուցման
ամբողջ դրոճը:

ՊԵՏԵՐՈՒԴԻ, 14 մայիս: «Правительствен-
ный Вѣстникъ» խօսելով քաղաքացիական կա-
նոնադրութեան նախագծերի կազմելու մասին,
հաղորդում է, որ խմբագրական յանձնաժողովը
գործունէութիւնը ունայնա, անշարժ կալուածնե-
րի հաստատութեան իրաւունքների մասին յանձ-
նաժողովի անդամների մեծամասնութեան բունած
դիքի պատճառով: Այդ մասին արդէն կազմեա-
ն են մի քանի նախագիծեր, ի միջի դոյա հայրենա-
կան անշարժ կալուածների կանոնադրութեան
նախագիծը, որը և այժմ ընկնում է խմբագրա-
կան յանձնաժողովի կողմից: Բացի դրանից, յանձ-
նաժողովը չուտով կը սկսի ընկնել այն նախագիծ-
ը, որոնք վերաբերում են հողաբարձական (օպե-
կուսների) կարգադրութիւններին և կանոնադրու-
թեանը: «Новое Время» լրագիրը հաղորդում է,
որ պետական խորհրդի աշխատանքին նստաշըջա-
նին պէտք է ներկայացվին այն օրինադրերը, ո-
րոնք վերաբերում են Սերբիի տեղական վարչու-

թիւնների փոփոխութիւններին, ուսանապատակ-
ների անցադրերին կայսրութեան սահմաններում,
և Անդրկասպեան երկրի ֆինանսներին և վարչու-
թիւնների փոփոխութիւններին: «Новости» լրա-
դիրը հաղորդում է, որ սպիւրտ արտահանման
արտահանելու գործին նպաստելու համար ներ-
կայացված է պետական խորհրդին մի առաջա-
դրութիւն, որով թոյլտուութիւն է խնդրվում՝ փո-
խանակ սպիւրտ ակցիզից ազատելու համարելով
այդ որպէս պէմօն և ճանապարհածախս արտա-
հանվող սպիւրտի համար՝ տալ արտահանողներին
ակցիզից ազատ սպիւրտի իւրաքանչիւր գրաւում
համար 8 կօպէկ: Գրամական պրէմիաների տալը
ենթադրվում է յունվարի 1-ից:

ՓԱՐԻՋ, 14 մայիս: Ֆրանկի նախագահու-
թեամբ մինիստրութիւն կազմելը չը յաղորդեցաւ
Լրագիրները հաղորդում են նոր կազմակերպու-
թեան մասին, որի համաձայն մինիստրական
խորհրդի նախագահ պէտք է լինի Գլուխը, որը
մինչև այժմ քաղաքական աչքի ընկնող դեր չէ
կատարել: Այդ կազմակերպութեան միջից Բու-
լանտէ հանված է և նրան փոխարինում է Փարի-
զի այժմեան նահանգապետը և Բուլանտէի քա-
ղաքական հակառակորդ գնեւոր Սօսիէ: Սակայն
կարող է տեղի ունենալ մի կազմակերպութիւն,
որի մէջ կը լինի և Ֆրէյսինէ, և երեկ երեկոյեան
պէտք է որ նա նոր խորհրդակցութիւն ունենար
Գլուխի հետ:

ԲՈՒԲԵՆ, 14 մայիս: Ազատամարտից եկած
Լուրերից երևում է, որ Արդուարմանը յայտնել
է, թէ անձամբ դուրս կը գալ գիւղացիների դէմ, ե-
թէ իր գնեւորները կարող չեն լինի ճնշել ապս-
տամբներին:

ԲՈՒԿԱՊԵՇՏ, 14 մայիս: Ունգարական սեյմի
փակման ժամանակ կարգացված դահական ճա-
ռում շնորհակալութիւն է յայտնվում սեյմին այն
պատրաստականութեան համար, որով, չը նայած
ֆինանսական անբարեկամի դրութեան, հաստատ-
վեցան այն փոխառութիւնները և օրինադրերը,
որոնք անհրաժեշտ էին պետութեան ապահովու-
թեան համար: «Այդ պատրաստականութիւնը,
ասված է ճառի մէջ, ապացուցանում է, որ սեյ-
մը կառավարութեան նման ցանկանալով պահ-
պանել խաղաղութիւնը, ամեն տեսակ դժբաղդու-
թիւններ կանէ այն դէպքում, երբ այդ կը պա-
հանջեն դահի, պետութեան և Ունգարիայի շահե-
րը: Ճառի վերջում յիշատակվում է կայսրու-
թեան երկու մասերի համար էլ այն բարեկա-
տն համաձայնութեան մասին, որը կայացել է
աւստրիական և ունգարական կառավարութիւն-
ների մէջ,—մի համաձայնութիւն, որը ծառայում
է իբրև նեղուկ միջադպային այն համաձայնու-
թիւնների համար, որոնց նպատակն է պահպանել
խաղաղութիւնը, պահպանելով ըստ արժանոյն
կայսրութեան կենսական շահերը:

ՓԱՐԻՋ, 14 մայիս: Երեկ երեկոյեան «Օպերա
կօմիկ» անուանված թատրոնում ներկայացման
ժամանակ հրդեհ պատահեց, թատրոնը կատարե-
լապէս այրվեցաւ: Մինչև այժմ գտնված են 19
դիակ և 60 վերաւորվածներ:

ԲԵՐԼԻՆ, 14 մայիս: Թագաժառանգի հիւան-
դութեան վերաբերալ լուրերի առիթով պաշտո-
նապէս հաղորդվում է, որ մասնադէտ պրօֆէսոր
Մակենդի գնեւորով թագաժառանգին, յայտնեց,
որ հիւանդութիւնը այնքան էլ վտանգաւոր չէ, և
կարող է անհետանալ, եթէ հիմնաւորապէս բժշկ-
վի:

Կ. ՊՈԼԻՍ, 14 մայիս: Լուրերին նայելով, մի
դաւաղութիւն է բացված, որի նպատակն է ե-
ղել զահէնից անել Սուլթանին: Դաւաղիւնները
մտադիր են եղել բարձրացնել զահի վրա զահէն-
ից եղած Սուլթան Մուրադին:

ՓԱՐԻՋ, 14 մայիս: Ֆրէյսինէ յանձն առաւ
կազմակերպել նոր մինիստրութիւն: Գրեկի մօտ
տեղի ունեցած երկարատև խորհրդակցութեան
ժամանակ, ներկայ էին Ֆերրի և մի քանի ուրիշ
օպորտունիստներ:

Ս. ՊԵՏԵՐՈՒԴԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 13-ին

Ռուսաց 1 րուբլ	Լօնդօնի վրա արժէ	21 3/4	պէնս.
—	Համբուրգի վրա	185 1/4	պֆ.
—	Փարիզի վրա	229 1/2	սան.
Ռուկի	արժէ	—	9 > 12 կ.
Մաքսային կուպոններ	—	175	> 25 >
Արծաթ	—	—	1 > 33 >

